շատ լաւատես էին իրենց ձեռնարկութեան նը-կատմամբ։ Նրանք համոզուած էին, որ Հայաստանի ազատութիւնը շատ հեշտ գլուխ գալու բան է, ընդամէնը մի ամսուան գործ — որովհետեւ նախ՝ Պարսկաստանը չափազանց թոյլ էր, քայքայուած, եւ երկրորդ՝ հայերն էլ ունէին այն ամէնը, ինչ որ հարկաւոր էր այդ ձեռնարկութեան համար — ե՛ւ դրամ, ե՛ւ զէնք, ե՛ւ մարդ, եւ պարէն։ Պակասում էր միայն մէկ գլուխ, որը իր փոքրիկ ուժերով դար դրսից եւ ղեկավարէր գործը։

Եւ վերջապէս Եւրոպայի վեհապետներից կամ իշխաններից ո՞ր մէկը չէր ցանկանայ այդքան դիւրին եւ միեւնոյն ժամանակ շա՜տ պատուաւոր գործի նախաձեռնութիւնը յանձն առնել — եթէ ո՛չ յանուն մարդկութեան եւ նահատակուող հայ ժողովրդի, բայց գոնէ Հայաստանի թագը իր կամ իր ազգակիցներից մէկն ու մէկի գլխին դնելու համար։

Անդամ Իսրայէլ Օրիի նման զինուորականն ու քաղաքական գործիչը կարծում էր, որ Հայաստանի ազատագրումը ընդամէնը 15 օրուան գործ է, եթէ դրսից լինի մի փոքրիկ օգնութիւն, այն էլ ոչ թէ «15 կամ 20 հազար, այլ միայն 5 հազար կռուող»։

5.

Ընդհանուր առմամբ մօտաւորապէս հետեւեալ ձեւով էին պատկերացնում արեւմտեան օրիենտացիայի բոլոր կողմնակիցները Հայաստանի ազատութեան գործը.—

Հայ ժողովուրդը, որ ապստամբութեան համար պատրաստ է, պասսիւ վիճակում սպասում է դրսի ոյժի մօտենալուն։ Հէնց որ այս վերջինը մօտենում է Հայաստանի սահմաններին, հայ զինուած ուժերն էլ անմիջապէս ոտքի են ելնում եւ միանում նրան։ Այդպիսով սկսում է ապստամբական շարժումը երկրի մի ծայրից եւ կամաց-կամաց թշնամուն քշելով, դրաւում են ամբողջ երկիրը։

Սկզբում ապստամբութիւնը միմիայն Պարսկաստանի դէմ է, որովհետեւ նախ ինչպէս ասացինք — Պարսկաստանն աւելի թոյլ է ու քայքայուած, քան Տաճկաստանը։ Երկրորդ՝ պարսկական ոյժիմը, մասնաւորապէս հայ ժողովրդի համար, շատ աւելի դաժան է, քան տաճկականը։ Սակայն պարսկական բաժնի ազատագրումից յետոյ՝ երբ Հայաստանի նորաստեղծ ազատութիւնն արդէն բաւականաչափ զօրեղ է եւ ամրացած, նոր սկսւում է նաեւ Տաճկաց Հայաստանի ազատագրութիւնը — էլի կամաց-կամաց եւ աստիճանաբար։ Այսպիսով ամբողջ հայրենիքն ազատագրւում է մահմեդական լծերից եւ անկախ ապրում։

Ազատագրուած Հայաստանի գլուխը թագաւորն է. իսկ թէ ո՛վ կը լինի այդ գլուխը՝ հա՞յ թէ օտարազգի — դա երկրորդական խնդիր է։ Բայց հայերը պատրաստ են Հայաստանի թագը տալու Եւրոպական այն իշխանին կամ վեհապետին, որը գործի գլուխ կ՝անցնի եւ հայ ժողովրդի ազատութեան նախաձեռնութիւնը իր վրայ կ՝առնի։

Մեր արեւմտականներից — այսպէս մենք անուանում ենք արեւմտեան օրիենտացիայի ներկայացուցիչներին — միայն Իսրայէլ Օրին է, որ քաղաքական գործունէութեան մէկ ամբողջական ծրագիր ունի իրեն դեկավար, թէեւ շատ դէպքերում բոմանտիկ, երազական ծրագիր։ Այդ ծրագիրը, իր խոշոր գծերով, հայ մելիքների ու իշխանների անունից, ներկայացուած է Պֆալցի իշխանին, յուշագրերի ձեւով։

Աւելորդ չենք համարում նրա մի քանի կարեւորագոյն կէտերը մէջ բերել, որոնք շատ բան են պարզում.—

1. Պֆալցի իշխանը մի տեսակ հոգաբարձու եւ լիազօր է հայկական դատի։ Նա՛ է գործի գլխաւոր դեկավարը։ Նա՛ է կամ նրա՛ անունից են վարւում բոլոր բանակցութիւնները եւրոպական արքունիքների հետ։

2. Որովհետեւ Հայաստանի ազատութեան գործը չափազանց մեծ գործ է — մեծ՝ իր բարոյական բովանդակութեամբ — ուստի անհրաժեշտաբար նրան մասնակից պիտի անել եւրոպական մի շարք արքունիքներն եւս։ Հայոց մելիքները իրենց յուշագրի մէջ — 22 Սեպտ. 1699 թիւ — իրրեւ այդպիսին յատկապէս չեշտում են — բացի Պֆալցի իշխանից եւ Հռոմի Պապից, որից աւելի բարոյական աջակցութիւն են սպասում — գերմանական կայսրին եւ Տօսքանայի մեծ դքսին։ Գերմանական կայսրը, Պֆալցի կայսրընտիրը եւ Տօսքանայի մեծ իշխանը պիտի կազմեն մի «եռեակ դաշնակցու-